

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(Շար. տես էջ 119)

ԱՆՏԵՆՔ՝ այժմ Հին Հայոց այն հաւատալեաց, որոնք վերաբերում են երկնային լուսաւոր մարմիններին: Վերը մենք արդէն առիթ ունեցանք ակնարկելու Հայոց հեղինակների երկերում այն հատուածների վրայ, որոնք հաստատում են այդպիսի աւանդութիւնների գոյութիւնը երկնային լուսաւոր մարմինների վերաբերութեամբ Հայերի մէջ: Հին Հայոց շատուածների այսպիսի առնչութիւնը երկնային մարմինների հետ մասնաւոր պարզ արտացոլում է Վահագնի և Տիրի վրայ:

Երկնային մարմինների անունը Հին Հայոց մօտ — որչափ հնար է գտնել լեզուում պահպանուած տեղեկութիւններից, չէ կրում իւր վրայ օտար լեզուի փոխառութեան կնիքը: Արեւին երկրպագութիւն էին մատուցանում աղանդաւորները, որ կոչւում էին արեւորդիք. այդ հեթանոսական աղանդը մնացել էր մինչեւ XII դարը Հայաստանում: Բայց Հայոց յիշեալ հեթանոսների կրօնը հիմնուած էր սեմական սկզբունքների վրայ: Պրօֆ. Խվուստն այս Արեւորդոց համարում է Շեմսիէ վարդապետութեան հետեւողներ (Die Ssabier und der Ssabismus I. 292).

Հին հեղինակների գրուածքներում մենք չենք գտնում պարզ և ճշգրիտ ակնարկներ, որ Հայաստանի բնակիչները արեւ պաշտելիս ինչէին, բացի վերոյիշեալ աղանդաւորներից, Զրադաշտի հետեւողների մէջ արեւը, որին վերագրում էին կենդանարար և քաւիչ զօրութիւն, մեծ պատիւ էր վայելում: Սասանեանց հարստութեան արքայն Յազկերտ II-ը

(438-457), կամենալով Հայերին Պարսից կրօնի դարձնել հետեւեալ հրամանը արձակեց. « ամենայն ազգ և լեզու՝ որ են ընդ իմալ իշխանութեամբ՝ դադարեցնին յիրաքանչիւր մուր օրինաց, և միայնոյ եկեցցեն յերկրպագութիւն արեգական, զոչս մատուցանելով և աստուած անուանելով »: (տես Եղիշէ էջ 22. հրատ. Խ. Յովհաննիսեանց. Մոսկուա 1892):

Գալով լուսնի գերին Հայոց հաւատալեաց մէջ, պէտք է նկատել, որ այդ կողմից մենք աւելի քարեպատեհ պայմանների մէջ ենք: Այս առթիւ արժանի է մեր խորին ուշադրութեան Անանիա Շիրակացու (VII դար.) ցուցումները. որ, երբեմն, ակնարկում է իւր հայրենակիցների ժողովրդական հաւատալեաց վրայ: Պրօֆ. Ք. Պատկանեանի հրատարակութեան 49 էջերում Անանիա՝ խօսելով լուսնի մասին, հաղորդում է մեզ հետեւեալն. « Բայց առաջինքն, որ ջանացին հասու իննել նմա, այսպէս ասացին, եթէ լուսինն տարր է սեղմ, խիտ, մաքուր, գնդաձեւ, և ոչ ունի զլոյսն բնութեամբ՝ այլ հաղորդութեամբ յարեգականէ առեալ »: Մի այլ տեղում նոյն Անանիան (էջ 66) ասում է. « քանզի առաջին հաբէն զլուսին դայեակ և անուցիչ բուսոց անուանեցին »: Այս երկու հատուածներն էլ մաքով մօտ են Ալիստայի հայեցածներին: Եթեմբորդ կամ Մախ (Māx) — Յաշուում մենք կարդում ենք այս հատուածը *ձաթ յաթ ma'qhem raoesuš tāpaieiti, mišti urvaranām zairigaonanām zaramaem paiti zomādha uzuesieiti*. զանշանկում է՝ « իսկ եթէ (արեւի) լոյսը տաքացնում է՝ լուսինը, այն ժամանակ երկրի վրայ միշտ բռնում է ոսկեծաղիկ բոյսերի դալարը »: Ոչ պակաս հետաքրքիր հատուած մենք գտնում ենք նաեւ Եգնիկի « Եգի կրօնից Յունաց իմաստնոցն » երրորդ գրքի 217 էջերում (Վենետիկ 1826). « Որպէս կախարհաց տեսեալ ի ժամանակի հրամանաւ Առ-

1. Ալիստայի բնագրում զրուած է բայս *tap*, հայերէն — տապիւմ. մեր լեզուում դա չէզոք բայ է. մինչդեռ ալիստականում — ներդրեալական է. բայս *Iustri* բառաբերի ներկայ անցողական եզ. 3

դէմքը — *tap* բայից կը լինի՝ *tāpayēiti*. բարունք փոքր ինչ տարբեր կերպով է զրուած *tāpaieiti*: Մ. Շ.:

տուժոյ զլուսնոյն արեւնադոյն լինելոյ զկերպարանսն՝ դիւի նմանել լուսնի բարբառնին։ Թէ զլուսին ինուցանիցեն »։

Հնդկների և իրանցիների մէջ կարծիք է տարածուած, որ իբր Թէ լուսինը, արեւը և աստղերը (խաւարման միջոցին) ենթարկուած են զեւերի և վիշապների յարձակմանը։

Ֆիրդուսի այդ առթիւ գրում է։ (էջ 695, 234)։

خور و ماه گفتی برونك اندوست
ستاره بكام نهك اندرست

« Դու կ'ասէիր Թէ՝ արեգակն ու լուսինը (այլ, պարզ) զոյն են ընդունել։ Իսկ աստղերը ընկել են կոկորդիլոսի բերանը »։ Գարձեալ։

شنيدم كه داستان جادر بچست
چه كار يازد بخور شيك داست

« Ես լսեցի, Թէ կախարդ Դեստանը ամենայն բանում ձեռք է մեկնում արեւին »։

« Վխաւ և Ռամին » վիպասանութեան մէջ կարգում ենք՝

استاد دشت ازدها ماه

որ նշանակում է՝ « աղատունցաւ լուսինը վիշապի ձեռքից »։ Պարսից կարծիքով, արեւգական, լուսնի և աստղերի երկրպագուներ էին համարում իրանի բնակիչները նախ քան Ջրագալտի կրօնի մուսլէն նոցա երկիրը։ Այսպէս Ֆիրդուսի աւանդում է, որ իբր Թէ Վշնասպ թագաւորը իւր պալատում զրել է Ջամշիդի պատկերը, որ արեւ ու լուսին էր պաշտում։

برو بر نكارد دشت چو شيد را
بچست دشت و خورشيد را

Յայտնի է, որ Ջրուանականների զրուպատական աղանդի վարդապետութեան մէջ մուրականերին երկրպագելն առաջին տեղն է բռնում, ինչպէս երեւում է այն համառոտ հատուածից, որ բերում է Spiegelը իւր Die traditionelle Litteratur der Parsen երկասիրութեան 161-166 էջերում։ Ըստ Ջրուանականների վարդապետութեան, որ սեմական ժաղուսից է բղխում, մուրակաները, հա-

մաձայն իւրեանց յատկանիշ բնաւորութեան և ազդեցութեանը մարդոց վիճակի վրայ, բաժանում են երեք զասակարգի։ Բարի մուրականներ, որ բախտ են բերում, համարում էին՝ բաց ի արեգակնից ու լուսնից, Լուսաբերը և Լուսնթագը։ Իսկ չար — Կռնոս և Հրատ խառն Փայլածուն։ Յենլով Խվոյոնի հարուստ նիւթերի վրայ, Շպիգելը կարծիք է յայտնում, Թէ զրուանականների հաւատալիքները փոխ են առնուած սեմական ազդեցիցի։

Ի դէպ ենք համարում Անանիա Շիրակացու երկերից քաղել երկու հատուածներ, ուր խօսուած է մուրականների մասին։ (64, 16)։ « Ասեն Հեթանոսը ի սոցանէ զամանաբար և զոմանա թշուառացուիչս, որպէս խնդրեն տանուտէրութիւն, առէս աստեղ՝ որ է երեքշարթ, զոր ասեն ոչ բարւոյ ձանապարհորդէին, կամ առնիցէ սկիզբն զործոյ։ Փոքր ինչ յետոյ — « Եմանապէս զատուտէրութիւն Կռնոս աստեղ որ է շարթ, զոր ասեն ամենայն թշուառութեան պատճառ »։ Դարձեալ (էջ 65)։ « Իսկ բարբար աստեղքն են լուսնթագ, լուսաբեր, և խառնաբար — Երեւակ։ Հրատ »։ Ապա՝ « Իսկ փայլածուն հասարակաց բնութիւն »։ Երեւակի և Կռնոսի վատ ազդեցութեան մասին մարդոց գործունէութեան վերայ էջնիկն էլ ստում է՝ « Որպէս Թէ յորժամ Կռնոսն յաստեղագունն մտանիցէ, թագաւոր մեռանի »։

Ֆիրդուսին եւս գրում է՝

دشمنی از او بر کشید بزند
كه نايد ز كيوان برون كزند

(նա տեսաւ) բոյնը, որ այնքան բարձր էր աստից, որ մինչեւ անգամ Կռնոսից՝ էլ վտանգ չէր սպասում նորան։ Այս մի հատուած եւս « Վխաւ և Ռամին » վիպասանութիւնից։

بهم كړن امدو خورشيد با ماه چو دستوری
كه كړيد راز باشاه
رفيقي هردو كشتم تير كيوان - بدان
تايدود پيوند پيوند ايشان

1. Կռնոսը բարձրագոյն մուրական է։

« Լուսինը մօտեցաւ արեւին, իբրեւ նախաբար, որ գաղտնիք է հաղորդում թագաւորին. նոցա յարեցան Փայլածուն և Կառնուր, կարծես, այն նպատակով, որ նոցա զուգաւորութիւնը չարագուշակ երեւի »:

Վերջ խօսելով Վահագնի մասին, մենք մէջ բերինք Անանիա Շիրակունուց մի հատուած, ուր յիշում է յարգազոյի հետքի մասին և ցոյց տալիք այդ երկնային երեւոյթի զուգահէտ անունը առաջաւոր Ասիայի շատ ազգերի մէջ: Սակայն նոյն Անանիայի գրուածքում կայ նաեւ մի այլ հետաքրքիր ակնարկ յարգազոյի հետքի դանապան անունների վերաբերութեամբ. — « և կէսք՝ Հին արեգակն ճանապարհ, և կէսք կառու երկնից. կէսք՝ պատառուցն, կէսք սպի տարեալ և կէսք յարգազոյս զհետ աստուածոցն »: Մանաւանդ ոչ աստուածների հետք, ճանապարհ զէպ ի շատուածներն, շատուածների ճանապարհ » անունը պատահում է շատ հնդկա-եւրոպական ազգերի և թիւրք ցեղերի մօտ: Այսպէս Արեւելեան Սիրիի Մոնղոլների մօտ յարգազոյի հետքը կոչում է տէնգէրին — օհօզու « բուրխանների կամ շատուածների ճանապարհ », թաթարները կոչում են ٢٢٢ چاچاچا ուխտաւորների ճանապարհ, Պարսիկները — ٢٢٢ چاچاچا:

Օգտուելով դէպքից բերում ենք մի հատուած Մ. Կաղանկատուացու Աղուանից Պատմութիւնից, ուր աւանդւում են Հոնաց ազգի նիստուկացը և հաւատարիքները. « Քանզի կրակաց և լոյց զոհէին և ճանապարհաց աստուածոց ոմանց երկիրպագանէին՝ լուանի և ամենայն արարածոց, որ ինչ թուէր յայն նոցա զարմանալի »: (տես Մ. Խմինի հրատ. էջ 191. Մտկուա 1860): Հանգուցեալ պրօֆ. Ք. Պատկանեանը յիշաւ հատուածը այսպէս է թարգմանում. « Նոցա զուհում էին կրակին և ջրին և երկրպագութիւն էին մատուցանում « ճանապարհների քանի մի շատուածներին », նոյնպէս և լուանին և բոլոր արարածներին, որոնք նոցա աչքերին զարմանալի էին երեւում: Մենք առաջաւոր

կում ենք, ասում է բարոնը, « ճանապարհաց աստուածոց » դարձուածը թարգմանել փոքր ինչ տարբեր կերպով այն է՝ « ճանապարհներին շատուածների »: Այսպիսի թարգմանութիւնը քերականական և համաձայնութեան տեսակէտից աւելի չիղէ կ'իշնէր: Իսկ այդ ճանապարհները շատուածների, հարկաւ, ոչ այլ ինչ են, եթէ ոչ վերջ յիշուած տէնգէրին — օհօզու և mutatis mutandis ٢٢٢ چاچاچا:

Մեզ մնում է մի քանի խօսք տեսլ ծածանի մասին: Այդ երկնային երեւոյթի մասին IX դարու հնդկական Թոմաս Արծրունին ասում է « Ժիածանը, զոր ամենք հուր մեկ-նեալ յամպոյ տացին, և որդիք տարրապաշտիցն՝ զօտի Արամազդայ »: (Տես. հր. Ք. Պատկանեան. էջ 19):

Ավետայոյ — Եսանայում IX, Գեղդէրի հրատարակութեամբ, Հայկ (Սրին) ասողը բազմաստեղ զօտի է անուանում, որ Ahuramazda շնորհէ է Haoma շատուածին. fra te Mazdaa barat paurnvan aiwyao-nhanem stehrapaesanhem mainyutastem. « քեզ բերաւ Արամազդը բազմաստեղ շատուայեա զօտին, Կառ Բզուց »:

Պարսից նոր մատենագրութեան մէջ, Սադիի բուստան երկում, ծիածանը կոչւում է چٚٚٚ چٚٚٚ « Կուս դեւի աղեղ »: Բազմաբերում եւս կան հետեւեալ ձեւեր՝ ٢٢٢ شيطان, այսինքն սատանայի աղեղ, ٢٢٢ كمان, Թոստամի աղեղ: Օտերը ծիածանը կոչւում են « Սոյանի էնգուր » այսինքն Սոյանի աղեղ:

Իրանական կրօնի մեծ ազդեցութեան մասին Հին Հայոց հաւատայեաց վրայ վկայում են մի շարք պարսկերէն ծագումից յառաջացած բառեր և դարձուածներ կրօնական կեանքում, որոնք քաղաքացիութեան իրաւունք են վայելում Հին Հայերէնում: Մէջ բերելով ղոցանից կարեւորագոյնները, մի կողմ ենք թողնում մնացեալները, որ բանասեր և լեզուագէտ ընթերցողը կարող է գտնել Հիւրմուշի Հայերէն Քերականութեան մէջ I. Ստրազբուրգ 1896 թ.

1. Ահեկան, (Հայոց իններորդ ամիսն) համապատասխանում է պեհլւի թուականին ին-

1. Տես Ք. Պատկանեանի հրատարակութիւն էջ 66. Ս. Պետերբուրգ. 1877 թ.:

ներորդ ātur, ādhar մասին, Հիւրըմանը (էջ 95)։ Համեմատում է հին Պարսից ābriya-diya ամսի հետ։ Հայոց աշեկանը ըստ ձայնական կազմութեան աւելի մօտ է արշակունի ձեւին — āthsakān (սասանական — պեհլեւի — āhrakan, նոր պարսկական — ادركان)։

2. ատրուշան — կրակատուն։ Փառստոսի բուզանդացւոյ Պատմ. դպր. IV. էջ 119. հր. Պատկ. Մերութեանը ասում է՝ «նախ ես, ասէ, շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ»։ Ատրուշան բառի վերջին վանկը մենք հաւասարում ենք պարսկական, ցածր յանգին, որ պահպանուել է کدخد, վարդի թուփ, բառի մէջ։

3. բագ, բագին, բագայառիճ. համ. հին պարսկական бага; գէկդ — bagha; պեհլ. bag; նոր-պարսկ. باده باده բադե-խանի անուաններ, Ֆիրդուսիի մօտ باده. հին-պարսկ. bagaputhra աստուածորդի, և այլն։

4. բարսում, ճիւղեր, որ գործ էին ածում պարսկիները կրօնական ծիսատարութեան միջոցին։ ավեստական — baresman, պեհլ. barsum, նոր պարսկ. بارش.

5. գոմէզ — կովի մէջ. ավեստական — gaomaēza, պեհլ. gōmēz, Մենք թոյլ տանք մեզ քաղուածօրէն մէջ բերելու այստեղ Եղիշէից մի հատուած, ուր պատահում է գումիդ բառը, շարունակում է բարոնը։ Այստեղ մենք կ'գտնենք Պարսից տէրութեան և գորդաշատական հոգեւորականութեան վարձուների յատկանիշ բնագործութիւնը հինգերորդ դարում, երբ ամենաձախորդ հանգամանքներում Հայերին վիճակուեցաւ պատեալով մղել քրիստոնէական հաւատի պաշտպանութեան համար։

«Դարձեալ և կանայք նախարարացն կալ-

ցին զուսուծն վարդապետութեան մոզացն։ Ուստիբք և դստիբք ազատաց և շինականաց՝ կրթեացին ի հրապարակ նոցուն մոզաց։ Կարճեացին և արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան զոր ունէին ի նախնեաց ըստ կարգի քրիստոնէութեանն. այլ փոխանակ ընդ կնոյ միոյ՝ բազում կանայս արասցեն։ զի անեցեալ բազմացին ազգք Հայոց։ Դատեբք՝ հարանց լինեցին, և քորք՝ եղբարց։ մարք մի ելցեն յորդոց, այլ և թոռունք ելցեն յանկողինս հաւուց։

Պատրուակը մի մեռցին անյազ, եթէ յօդեաց իցէ և եթէ յայծեաց և եթէ յարձառոց և եթէ ի հաւուց և եթէ ի խոզաց։ Հայսք առանց քանդամի մի զանգցին։ Ժիրտք և քակորք ի կրակ մի՛ եկեացեն։ ձեռք առանց դոմիդոյ մի լուսացին, շնչիրք և աղուէք և նապաստակք մի՛ մեռցին։ Ոձք և մողէզք, զորտք և մրջմունք, և այլ եւս խառնափնոր բազմանիք են՝ մի կացցեն (տես հր. Թ. Յովհաննիսեան. Մատենա 1892. էջ 50)։

6. գոթիք. պեհլ. — dōšaxv², նոր-պարսկ. خدو. գէնդ — duzah.

7. զանդիկ — մոնիքեցի աղանդաւոր պեհլ. zandikih արար. زندی. նոր-պարսկ. زندی իրանական zandika բառի նախնական նշանականութիւնը, հաւանական է, որ մեկնիչ է եղել։

8. զոհ. ավեստ. zaōthra, պեհլ. zōhr, Տես Եղիշէի էջ 17. ցուք սպիտակօք և գիսաւոր նոխազօք առատացոյց զզոհս կրակի։ Մեծ Սոլրատի Հայերէն թարգմանութեան մէջ (VII դարու) պատահում է զորհ. բարդութեանց մէջ զորհասէր (Լլմ. հրատ. էջ 255)։

9. Թափուտ = դազադ. Հիւրըմանը այժմ համարում է իբր փոխառեալ բառ պեհլեւի լեզուից. իսկ առտը նա կարծում էր, թէ

տեղից է քաղել «բարսում» ձեւը։ Մ. Ե.։

2. Այս օրինակը մենք քաղում ենք Հիւրըմանից (էջ 182) վասնզի բարսնի մօտ շատ ազգաբանական սխալներ կան։ Մ. Ե.։

1. Գուցէ, բարսումնք, որ նշանակում է զոհ բերող քրմի մանր գաւազանների խումբ։ Եղալի ձայնով «բարսում» մենք չենք պատահել. Հիւրըմանը նայպէս գործ է ածում «բարսումնք»։ ուստի չգիտենք, բարոնը ո՞ր

Պարսկական ծագումիցն էր. արաբ. تَابُوت
պարս. և աֆղան — tābūt եզդպտական —
tbt.

10. կախարդ. ափեսա. kaxwardha, իգ.
kaxwareidhi.

11. հուրբակ — կրակատուն. բունդեխե-
լում — ātar-i-frēbak, արաբացի Շախրիս-
տանի հեղինակի մօտ աղաւաղեալ ձեւով մենք
գտնում ենք ۱۰۰۰۰۰۰۰ նաեւ ۱۰۰۰۰۰۰۰, որ յետոյ
մտել է բառգրքերի մէջ և որի փոխանակ
հարկաւ պէտք է կարգաւ ۱۰۰۰۰۰۰۰: Բացի դո-
բանից Եղիշէի մօտ յիշում է՝ վումանական
կրակն. պեհլ. ataxš i vahramān, ataxš i
vahrām, Սերէստի մօտ՝ (Հերակլ կայսր) —
կորանէ և զբաղին հրատին մեծի, զոր
վնասպն կոչէին. պեհլ. Višnasp. Ֆիր-
զուսի ۱۰۰۰۰۰۰۰.

12. հրէշտակ. պեհլ. freštak. նոր-պարս.
دشمن.

13. Հրտից, Հայոց վերջին ամիսը համ.
պեհլ. fravartikān «նահանջ օրեր» . պարս.
۱۰۰۰۰۰۰۰۰۰۰۰۰. Մենակորի մօտ ۱۰۰۰۰۰۰۰۰۰۰.
համ. հին պարս. — fravarti, ափեսա.
fravaši.

14. Մենկականի. եօթներորդ ամիս Հայոց.
(համ. Μενόικαον Ստրաբոնի), ۱۰۰۰۰۰۰۰۰۰۰۰۰.
համ. ۱۰۰۰۰۰۰۰۰۰۰۰۰. Տարաբիի մօտ.

15. մոզ «Պարսից քուրմ» համ. մոզու-
թիւն, քուրմերի վարդապետութիւն, մոզա-
կան աղանդ. հին պարսից magu. պեհլ. mag.
նոր-պարս. ۱۰۰۰۰۰۰۰۰۰۰۰۰. մոզպետ. պեհլ. magupat,
mogpet, movpet. ۱۰۰۰۰۰۰۰۰۰۰.

16. յազել — զոհել. ափեսա. yaz, սանսկր.
yaś. yasna «զոհ», պեհլ. yazēm, yazešn.
յաշտ. ափեսա. yešti. պեհլ. yašt.

17. Նաւասարդ. հին Հայոց տաւիին ա-
միսը ափեսա. «saredha» տարի. Հին ա-
նունները ۱۰۰۰۰۰۰۰۰۰۰۰۰ պահպանուել են
միայն իրանի հիւսիս-արեւելեան զաւառնե-
րի բնակիչների մօտ (Սփարեզմ, Սօզդիանա),

Մ. ՇՈՎՐԵԱՆ

Շարայարեղի

Գ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

«Գրթութիւնն եմ, մըտերիմ Սեր՝
«Որ չըլուցած կ'արթննամ,
«Բնութիւնն երբոր կը նընջէ դեռ.
«Այս Աստուծոյ է պատգամ:

«Կ'այցելեմ ես խեղճուկ խղիկն
«Ուր չի մըտնեք արեւակ,
«Ունիմ ձեռքեր զիւրաբացիկ
«Եւ աշօթից եմ զաւակ:

«Կ'աղաչեմ, չեմ հրամայեք բնաւ.
«Ամէն մարդու սիրելի,
«Տըւողին խնդ կը թողում զբաւ
«Փութամ առ որբն ու այրի»:

Ո՛վ պարկեշտիկ ու վեհ պատկեր,
Ուր մեզ համար խառնեց Տէր
Հրեշտակային չըքնաղ ձիւրքեր,
Կընտը զըզուանքն ու սուրբ սէր:

Լըքուած ծերուն անկողինն բոլ
Հակի նա քաղցրը զէմբով.
Փան զոր երկրիս մէջ կամ երկինք
Ոչ ինչ կայ մեծ, գեղեցիկ:

Կ'երթայ ամէն փրկփրկած տուն,
Ու զուարթացած խեղճերուն
Կու տայ զինի, հաց, իւղ և յոյս,
Միանգամայն և խախտյալ:

Բետոյ փրնտոէ ասղին անդին
Այն մանուկներ մերկ ու տխուր,
Որոնք թըմրած միշտ կը մնանին
Ցուրաէն, քաղցէն անհամարոյր:

Չասո՞նք սիրէ ան աւելի,
Ըստուերասոյդ այս ճակատք,
Որ ետպրօշ պատկ կը փայլի,
Անմղզ, փոքրիկը ու աղքատք:

Եւ լուսաւոր եմէ ճակտով
Ճօն մ'անցնի այն վայրկենին,
Կը քաշէ ան ծայրէն մեղմով
Անոր գոռոզ ըզգեստին:

«Ո՛հ, սուր ինծի որ տամ ես ալ.
«Բունիկս ունիմ թըռուկներ,
«Ողբումիս սըրբէ մեղքեր,
«Անմղուլթեան տայ սուրբ փայլ»:

ԹԳԻ. Լ. Ա. ՂԱԶԻՅԱՆ